

ԱՌ Ա Կ Բ

ԱՂԲԵՐԱԿՆ ԵՒ ԱԳԱՀ

Ի հոններուն ծոցէն ինձ Սղբերակն,
 Մեղմ՝ ձևանալով՝ գեղեցիկ առուակ,
 Պայծառ ջրերով
 Հանդարտ վազելով
 Արտերուն միջէն,
 Ծաղկեալ մարգերէն,
 Կեանք կենդանութիւն
 Կու տար ամենուն: —
 Մի՛ Ագահ ժըլատ,
 Տըրտարգէմ, ժանտ մարդ,
 Կըռնակը չալկած
 Ոսկի մեծագանձ,
 Երբ մտտեցաւ առուակին ջով,
 Լաւ մի շորս կողմը նայելով,
 « Դուն պէտք էր որ երկրիս խորեր,
 Ասաց առուին, ջրամբարներ
 Ունենայիր ընդարձակ,
 Ու հոն ջրերդ անապակ
 Ժողովէիր ծովու նման,
 Իբր ըստացուած սեփական.
 Որոց վըրայ նայելով
 Ըզմայլէիր դուն քեզմով:
 Այլ ինչ տեսմ՝ որ յիմար ես,
 Անգին ջրերդ կը ջըրուես՝
 Մարգագետին, դաշտ և արտ:
 Ապերախտք
 Անյագ, անկուշտ կը խըմեն
 Չըրերդ, դարձեալ տըժգոհ են »:
 « Տըժգոհ թէ չէ՛,
 Այն իմ գործս չէ.
 Ասաց Առուակն կարկաչելով.
 Այլ օգնելով նոցա՝ ես
 Գուն կը լինիմ մեծապէս:
 Թո՛ղ որ շահուին ամէնք ինձմով.
 Չի կ'ուզեմ որ անցած տեղերս
 Իմ լաւութեան թողուած հետքերս:
 Երբ մտտս թառած ի ծառին
 Ճոխայ սոխակն ի ճըղին.
 Կամ գեղացի աղջիկներ
 Տեսնեն իրենց վարդ գէւքեր
 Ախրներուս մէջ տըլպուած,
 Ու Միծեռնիկ թևատարած
 Չըրիս քըտուի՛ վեր թըռչի.
 Երբոր շորս դիս տարածուի
 Հագար ծաղիկ գոյնըզգոյն,
 Ախրներովս պաղպաջուն
 Ես կը խայտամ, իրելով
 Որ այդ ամէնքը ինձմով
 Կ'ուրախանան, կը շահուին :..

Իրաւ ամառը տաքին
 Իմ այրները կը մեղմանան,
 Այլ յորդահոս անձրևք այնան
 Շահումն կու տան առատ վարձ
 Բարի սըրտիս փոխադարձ:
 Դու եկ ասա հիմա ինձի,
 Թէ քու պահցու արծաթն, ոսկի
 Քեզ կամ այլոց ինչ շահ ունի:
 Չէ՛, — Ինչ անուն տամ ես քեզի,
 Ագահ, յիմար, անխելք, խօշ,
 Թէ անձնապաշտ ինքնամոլ »:

Ագահութիւն

Միշտ զըզուելի է ամենուն.
 Բայց ով սիրով առ մարդիկ
 Կը տարածէ ձեռք ու զիկի,
 Եւ գըթալիր՝ կարօտներուն
 Կը բաժանէ ողորմութիւն.
 Երանելի է այն մարդ,
 Նախանձելի նորս բազդ,
 Չի կ'ունենայ նա մի օր
 Որ տըռածները բուրբ
 Յետ կը ստանայ վերտօտին,
 Ինչպէս որ հոս՝ նոյն այն դին,
 Մէկին փոխան հարիւր հազար
 Երկնակայել պարգև արգար:

ՄԵԽԱԿ ԵՒ ԱՄՊ

Ամառուան մի տաք շոգ օդին
 Կարմիր Մեխակն երկրագին
 Ծարուած պապկած կը տանջուէր.
 Մահ նարամէ շատ հեռուն չէր:
 Մտ տեսնելով որ վերև
 Ամպիկն՝ մըտած հովին թև.
 Ուրախ զուրաթ առաջ կ'երթայ,
 « Կեցիր, կ'ասէ, գթա իմ վերայ,
 Աչտտէ կեանքս սիրուն Ամպիկ,
 Յոգէ ծոցէդ քանի մ'կամիլք »:
 « Լաւ լաւ, կ'ասէ, Ամպը վերէն,
 Երթամ, կու գամ, և այն ատեն
 Չէ թէ ցողեմ՝ սիտի թիթև,
 Այլ յորդառատ և շարք անձրև
 Կը թափեմ՝ ես հովախղ վերայ »:
 Այս կ'ասէ ու առաջ կ'երթայ:
 Կը խոնարհի Մեխակիկ,
 Աչք կը օգտէ մահուն գիրկ:
 Երկու օրէն կը դառնայ Ամպն որոտագին
 Ու կ'ողողէ սև գերեզման Մեխակին:
 Հեղանաժամին կարօտելոյն
 Չեղք տոր՝ հասիր յօգնութիւն.

Բանը բանէն անցնելէն վերջ,
 Երբ մին ընկաւ խաչին ներքեւ
 Անօգուտ է մարմանս չեղի:
 Չորցած ծաղկին ոչ յորդ անձրև
 Կարող է տալ կենդանութիւն,
 Ոչ մեռելին մարմար արձան,
 Ծաղկեայ պըսակ վրան անթառամ
 Չեն տար բընաւ կեանք յարութիւն:

ԷՇ ԵՒ ՎԱՐՍԱԿ

Խելացի էչն միանգամ
 Տեսաւ դիմացն անգուաման,
 Երկու տուրակ
 Լեցուն Վարսակ:
 Ելարեցաւ եղկելին,
 Բերնէն ջրեր վազեցին:
 Այլած կուշտ կուշտ կը նայէր,
 Ու որոշել նա չէր կարնար
 Թէ որը նախ ճաշակէր,
 Ո՛րը պահէր վաղուան պաշար:
 Խընդիրը մեծ նորա համար,
 Եւ որոշելը շատ զբժար: —
 Եոյն միջոցին, յանկարծակի,
 Վազելով հոն ձին չըհանմի:
 Իլուն քըթին տակ
 Երկու լի տուրակ,
 Պատրաստի Վարսակ,
 Համեղանալակ,
 Կ'ուտէ ախորժով,
 Ու խըրխընջալով
 Կը վազէ դէպ 'ի ջըրհոր,
 Չովացնել կըլտացած փոր:
 Քեզի է խօսքըս, լըսէ,
 Թըմրած յողդողդ պատանի,
 Երբոր քեզի բաղդն ժըպտի,
 Իսկայն շահուիլըդ նայէ:
 Թէ չէ ճարտարը քան ըզքեզ,
 Մինչ վարանիս դու իշապէս,
 Քու քըթիդ տակ, աքիդ դիմաց'
 Կը խըլէ քու պատաստիկ հաց:

ՀՆՂԵՂ

Վայրագ Հեղեղը յաղթադուր'
 Բաշեր յողին՝ ճերմակ վըրփուր,
 Իրբև առիժ կատաղաբար
 Բարձր լեռներէն կ'իջնար ի վայր,
 Աւերելով և քանդելով անխընայ
 Ընդդիմակաց ամենայն ինչ առարկայ:

Ոչ ծառ, ոչ ժայռ չէին զօրել
 Նորա թափին արգելք լինել:
 Երբ գեղացւոց մեծ բազմութիւն,
 Որ մի ժողոված լեբան գըլխուն,
 Կը խորհէին միաբան՝
 Գըտնալ մի ճար կամ դարման՝
 Այդ կատաղի տարեր դէմ՝
 Որ իրենց դայտն ազատեն,
 Համարդին մէկն, կանգ առնելով,
 Իսկոյն խորհուրդ տուաւ, շուտով
 Չուռք զարնել նոր ճանապարհի
 Լեռան վերէն, ոչ ուղղակի,
 Հեշտ դարվարով, ծամածուռ
 Տեղ տեղ թումբեր քարակուռ:
 Միացն, կ'ասէ, այս կերպով
 Գուք կարող էք ապահով
 Սանձել դորա բընութիւն:
 Որով քանդին ձեր դաշտերուն
 Կը լինի ձեզ ծառայ, ջըրկիր:
 Ծաղկին արտերդ արօրադիր:
 Քալ էր խորհուրդն, երկրորդ առտու
 Շատ մըջակներ լեռան շորս քով
 Ըսկանն ի ժիր աշխատելու,
 Երբ ճանապարհն բացին շուտով:
 Փըրփրած Հեղեղը իսկոյն
 Մէջը մըտաւ այն ճամբուն:
 Այլ ծուռ ու մուռ ելէնէք
 Շուտ կոտորեցին նորա մէջք:
 Քարի, պատի դարնալով,
 Վեր վար իջնալ ելնալով
 Յօգնած, դարբած, յուսահատած,
 Վայրինի բարք մեկ զի զըրած
 Հեղեղն՝ եղաւ հանդարտ առու,
 Յարմար դայտերը ջըրելու:
 Եւ երեկուան շար թըլնամին
 Այսօր եղաւ բողբ գեղին
 Խիտ օգտակար բարեկամ:
 Դայտ, վարուցան, սեխեստան
 Առուին ջըրով ուռնացան,
 Պարտէզք, այգիք, բուրաստան
 Առուն իրենց տուն տարին
 Իբր բարեկամ թանկագին:

Խիտ բընութեան դէմ՝ փոխանակ
 Բըռնութեան գէնը ձեռք առնելու,
 Դուռ բանեցուր սիրող ջըրթանք,
 Եւ խոհական անոյշ լեզու,
 Որով բնութեան թերին, պակաս
 Տակաւ ուղղել՝ ջըտկել կարնաս:

Հ. ՔՅՐՈՎԱԿ Կ. ՔՈՒՅՆՏՐԵՍՏ